



**ԵՐԵՎԱՆԻ ՄԵԾԻՔԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԵՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ
ԱՌՑԱՆՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

Հաստատվել է

ԵՊԲՀ Մանդատային հանձնաժողովի
14.10.2020 թվականի թիվ 73 որոշմամբ
Մանդատային հանձնաժողով
նախագահ Լ.Ռ.Ավետիսյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) «Ուսումնական գործընթացի և գիտելիքների ատեստավորման առցանց կազմակերպման կանոնակարգով» սահմանվում է՝ 2020-2021 ուստարվա աշնանային կիսամյակի՝ 15.10.2020-12.11.2020թթ. ժամանակահատվածում, Համալսարանի բարձրագույն կրթության ուսանողների բոլոր ֆակուլտետների կուրսերում կրթության առցանց կազմակերպման կանոնները՝ «ZOOM» հարթակում:

Սույն կանոնակարգի գործողության ժամանակահատվածում հիբրիդային ձևաչափը կասեցվում է:

Հայաստանում համաճարակային իրավիճակով պայմանավորված, սույն կանոնակարգի 1-ին կետում սահմանված ժամկետները կարող են փոփոխվել Համալսարանի մանդատային հանձնաժողովի որոշմամբ:

2. Համալսարանում առցանց դասերը կազմակերպվում են համաձայն դասացուցակի, առանձին խմբերով՝ օգտագործելով դասացուցակով դասին հատկացված ժամանակը:

3. Դասավանդման առցանց բաղադրիչն իրականացվում է հետևյալ կանոններով՝

ա) Դասախոսները և ուսանողները պետք է ապահովեն անխափան և որակյալ ինտերնետային կապ, որի հնարավոր խափանման դեպքում, որպես պահուստային միջոց, պետք է ունենան առնվազը 3G ինտերնետային կապ:

բ) Ուսանողները հարթակում պետք է գրանցված լինեն իրենց խմբի համարներով, անուն, ազգանուններով, ներկա լինեն միացրած տեսախցիկով, որը կարող են անջատել միայն դասախոսի թույլտվությամբ: Նախորդող և հաջորդող 40 րոպե դասերի միջև սահմանվում է 3-ից 5 րոպե ընդմիջում՝ դասը վերսկսելու նպատակով:

գ) Առցանց դասերին ուսանողի մասնակցությունն ամրագրվում է «Screen Shot-ի» միջոցով և խմբի մատյանում գրավոր նշումներով:

4. Առանձին դեպքերում դասացուցակով նախատեսված դասաժամին բժշկական գործունեությամբ զբաղվածություն ունեցող կլինիկական ամբիոնների դասախոսները կարող են դասը տեղափոխել օրվա երկրորդ կես՝ ուսանողների հետ համաձայնեցված և նախօրոք ամրագրված ժամին՝ այդ մասին տեղեկացնելով դեկանատին:

5. Առցանց դասերի ընթացքում, ելնելով առարկայի առանձնահատկություններից, պարտադիր է մասնագիտական տեսաֆիլմերի և (կամ) անիմացիաների և (կամ) թեմատիկ նկարների և (կամ) մորֆոլոգիական պրեպարատների կիրառումը և (կամ) հիվանդության պատմագրերի և (կամ) իրավիճակային խնդիրների և (կամ) դեպքերի ներկայացումը և վերլուծությունը: Վիրաբուժական առարկաների դեպքում հնարավորության սահմաններում կազմակերպել վիրահատական գործընթացի ուղիղ հեռարձակում և/կամ այդ վիրահատությունների տեսաձայնագրությունների ցուցադրում և մեկնաբանում:

6. Ուսանողների բացակայությունների հաշվառումն ու վերահսկումը կարգավորվում է Համալսարանում գործող համապատասխան կանոններով: COVID19 (հիվանդ և կոնտակտավոր) համավարակով պայմանավորված հիվանդությամբ, ռազմական դրության պայմաններում կամավորական աշխատանքներին մասնակցելու և օտարերկրյա ուսանողների տեղաշարժի սահմանափակումների պատճառներով բացակայած ուսանողները կարող են կիսամյակի ընթացքում բաց թողնված դասերի օրերը անվճար հիմունքներով լրացնել՝ այլ խմբերի հետ և մասնակցել ատեստավորման՝ նախապես ներկայացնելով դիմում և համապատասխան հիմնավոր փաստաթուղթ, որի դեպքում պահպանվում է անվճար և վճարովի տեղերի միջև ամենամյա փոխատեղման մրցույթին ուսանողի մասնակցելու իրավունքը:

7. Սույն կանոնակարգով սահմանված ժամանակահատվածում ցիկլային պարապմունքների առարկայական ծրագրերով ամրագրված գործնական ունակությունների ուսուցման գործընթացը, այդ թվում սիմուլյացիոն կենտրոններում, կիրականացվի ուսումնական տարվա աշնանային կամ գարնանային կիսամյակներում՝ ուսուցման առկա կամ հիբրիդային ձևաչափի կիրառման դեպքում՝ կազմակերպելով՝ 1-2 օր տևողությամբ լրացուցիչ դասընթացներ:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ

8. Ուսանողների գիտելիքների ատեստավորումը բոլոր կուրսերում բոլոր առարկաներից իրականացվում է առցանց՝ ստուգարքի ձևով՝ 3 հարց պարունակող առնվազն 30 տոմսերի միջոցով, բացառությամբ սույն կանոնակարգի 10-րդ կետում նշված առարկաների: Ուսանողի կողմից ընտրված համարի տոմսը ներկայացվում է ուսանողին տեսախցիկի միջոցով: Դասախոսը հնչեցնում է հարցը, ուսանողը տոմսում ընդգրկված հարցերին պատասխանում է անմիջապես՝ խմբի ուսանողների ներկայությամբ: Հարցաշարը ուսանողներին պետք է տրամադրվի դասերի մեկնարկին: Ատեստավորման գործընթացը պետք է տեսաձայնագրվի: 1-ից 3-րդ կուրսերի ըստ կրթական ծրագրերի ստուգարքային առարկաների ատեստավորումներն իրականացվելու են սահմանված ստուգարքային շրջանում, իսկ քննական առարկաների ստուգարքային ատեստավորումները՝ քննաշրջանում: Հանրային առողջության ֆակուլտետում ուսանողների գիտելիքների ատեստավորման գործընթացը կազմակերպվում է ըստ գործող կանոնակարգի:

9. Հասարակագիտական, հայոց և օտար լեզուների առարկաների ատեստավորումների դեպքերում ուսանողները ատեստավորվում են 2-ից 3 դրական պատասխանի (շաբաթական 1 մուտքի դեպքում՝ 3, երկու շաբաթվա ընթացքում 1 մուտքի դեպքում՝ 2 պատասխանի) հիման վրա: Անհրաժեշտ թվով դրական պատասխանների բացակայության դեպքում ուսանողը կիսամյակի վերջին դասի օրը ատեստավորվում է դասախոսի կողմից իրեն տրվող հարցերին դրական պատասխաններ տալու հիման վրա: Բացասական արդյունքի դեպքում առարկան կատեստավորվի մարման շրջաններում:

10. Ուսանողներին զեղչերի տրամադրումն ապահովելու պահանջներից ելնելով (բացառությամբ՝ ՌԲՖ առաջին կուրսի կուրսասնտներից, ՊՈւ ծրագրով առաջին կուրսի սովորողներից և առաջին կուրսում սովորող օտարերկրացի ուսանողներից) և շարունակական

առարկաների՝ տվյալ կիսամյակում ավարտվելու հանգամանքից, կազմակերպվում են (թույլատրելի փոքր խմբերով՝ պահպանելով հակահամաճարակային կանոնները) համակարգչային և գրավոր (օտարերկրացի ուսանողներ) քննություններ հետևյալ առարկաներից.

ա) Ընդհանուր բժշկության ֆակուլտետ՝

• առաջին կուրս՝ «Նորմալ անատոմիա»,

բ) Ընդհանուր բժշկության և Ռազմաբժշկական ֆակուլտետներ՝

• երկրորդ կուրս՝ «Հյուսվածաբանություն»,

• երրորդ կուրս՝ «Մանրէաբանություն», «Տեղագրական անատոմիա և օպերատիվ վիրաբուժություն»,

գ) Ստոմատոլոգիական ֆակուլտետ՝

• առաջին կուրս՝ «Նորմալ անատոմիա»,

• երկրորդ կուրս՝ «Հյուսվածաբանություն»,

• երրորդ կուրս՝ «Մանրէաբանություն»,

դ) Դեղագիտական ֆակուլտետ՝

• առաջին կուրս՝ «Ընդհանուր քիմիա»,

• երկրորդ կուրս՝ «Օրգանական քիմիա», «Ֆիզիոլոգիա՝ անատոմիայի հիմունքներով»,

• երրորդ կուրս՝ «Ախտաբանություն»,

• մագիստրատուրայի առաջին կուրս՝ «Բժշկական և դեղագործական ապրանքագիտություն»,

ե) Հանրային առողջության ֆակուլտետ՝

• «Առողջապահության կազմակերպում և կառավարում» մագիստրոսական ծրագրի առաջին կուրս՝ «Առողջապահության կառավարման հիմունքներ»

• «Բուժհաստատությունների կառավարում» մագիստրոսական ծրագրի առաջին կուրս՝ «Ժամանակակից կառավարման հիմունքներ»

11. Բանակից նոր զորացրված ուսանողները սովորելու և ատեստավորվում են համապատասխան կուրսի ուսումնառության և ատեստավորման սկզբունքներով՝ օգտագործելով ատեստավորման իրենց վերապահված բոլոր հնարավորությունները:

12. Նախորդ կիսամյակի առարկաների ակադեմիական պարտքերն ու առարկայական տարբերությունները ատեստավորվում են ըստ սույն կանոնակարգի 8-րդ կետի, իսկ ընթացիկ

կիսամյակի առարկաների ակադեմիական պարտքերի ատեստավորումները՝ ըստ համապատասխան կուրսի սկզբունքների: Առարկայական տարբերությունները և ստուգարքային առարկաների ակադեմիական պարտքերը կազմակերպվում են դեկտեմբեր ամսվա երկրորդ կեսին, իսկ քննական առարկաների ակադեմիական պարտքերը՝ ձմեռային քննաշրջանում (1-ից 3-րդ կուրսերի դեպքում):

13. Դասավանդման և գնահատման բազմաբաղադրիչ ձևաչափով դասավանդող ամբիոնների կողմից բաղադրիչների թիվը կամ պահանջները վերանայվում են՝ հնարավորինս բեռնաթափելով դրանք կամ անցնելով բոնուսային «V»-երի համակարգի:

14. Առցանց դասավանդման և ատեստավորման կազմակերպման և վերահսկման գործընթացի պատասխանատուն ամբիոնի վարիչն է:

15. Սույն կանոնակարգը ամբիոնի վարիչի կողմից, համապատասխան ցուցումներով, ներկայացվում է ամբիոնի դասախոսական կազմին:

16. Առցանց ձևաչափով ուսումնառությանը մասնակցել չցանկացող ուսանողները կարող են ժամանակավորապես դադարեցնել իրենց ուսումը, այն հետագա ուստարիներին ընթացքում շարունակելու պայմանով: Այս պայմանով դադարեցված ուսուցումը վերսկսելու դեպքում ուսանողը պահպանում է ուսման վճարի չափը: Այս դեպքում ուսանողը Համալսարանի info@ysmu.am էլեկտրոնային հասցեով կարող է ներկայացնել ռեկտորին ուղղված համապատասխան դիմում՝ մինչև 26.10.2020 թվականը:

17. Սույն կանոնակարգով չսահմանված և ժամանակավոր առցանց կրթությանն առնչվող հարցերը կարգավորվում են Համալսարանի մանդատային հանձնաժողովի որոշումներով:

* * *